«Իրազեկ Քաղաքացիների Միավորում» Խորհրդատվական ՀԿ
"Union of Informed Citizens" consulting NGO

ք. Երևան 0038, Աբելյան փող. 6/1, սենյակ 411Ա
6/1 Abelyan str., room 411A, Yerevan 0038
+374 (0) 11 355042,
UIC.am, uicarmenia@gmail.com

ՏԵՂԵԿԱՆՔ

վերջին 2 տարում «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծավալած գործունեության վերաբերյալ

- 2020 թ.-ին ՀՀ վարչապետի որոշմամբ՝ «Իրազեկ քաղաքացիների միավորումը», ի դեմս Դանիել Իոաննիսյանի, ներգրավվել է ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհրդում (մինչև 2024 թ.)
- 2020-2023 թթ.-ին կազմակերպությունը ներգրավված է եղել ոստիկանության բարեփոխումների աշխատանքային խմբում,
- 2020-2023 թթ.-ին կազմակերպության ներկայացուցիչները ներգրավված են եղել Պարեկային ծառայության ընդունելության հանձնաժողովներում,
- 2022 թ.-ին կազմակերպության կողմից կազմակերպվել է այց կրթահամալիր՝ բարեփոխումների պատասխանատուների մասնակցությամբ,
- 2022 թ.-ին Պարեկային ծառայության ներդրման և ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ կազմակերպությունն ունեցել է հանդիպումներ ՀՀ մարզերում,
- 2022 թ.-ին կազմակերպության կողմից կազմակերպվել է Պարեկային ծառայության ներդրման վերաբերյալ հանդիպում մարզպետների, ոստիկանության և Արդարադատության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ,
- 2022 թ.-ին կազմակերպությունը պարեկային ծառայողների ընդունելության հարցազրույցների և պետական ատեստավորման քննությունների վերաբերյալ ներկայացրել է առաջարկներ, որոնց մի մասն ընդունվել է,
- 2022 թ.-ին կազմակերպության ներկայացուցիչները մասնակցել են ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ խորհրդարանական լսումներին, հանդես եկել ելույթով,
- 2022 թ.-ին կազմակերպությունը ոստիկանության բարեփոխումների աշխատանքային խմբի կազմում այցելել է Լոռու Պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման կենտրոններ՝ տեղում դիտարկելով առկա խնդիրները,
- 2022 թ.-ին Roadpolice հավելվածի վերաբերյալ կազմակերպության առաջարկներն ընդունվել են,
- 2023 թ.-ին կազմակերպությունն ընդգրկվել է ոստիկանության ծառայողների ատեստավորման հանձնաժողովի կազմում,
- 2023 թ.-ին կազմակերպությունն ընդգրկվել է ՆԳՆ քաղաքացիական ծառայության պաշտոններում թեկնածուների հետ հարցազրույց անցկացնելու նպատակով կազմված հանձնաժողովներում,
- 2023 թ.-ին կազմակերպությունը մասնակցել է «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքի մշակման և այլ հարակից իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթի քննարկմանը: